

Այց Գեղարքունիքի մարզի Մարտունու «Կենտրոնական գրադարան»

Սեպտեմբերի 19-ին Հայաստանի ազգային գրադարանի աշխատակազմը այցելեց Գեղարքունիքի մարզի Մարտունու «Կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ: Աշխատակիցները տեղում ծանոթացան գրադարանի շենքային պայմաններին, ուսումնասիրվեց գրքային հավաքածուն, անդրադարձան նաև համալրման խնդիրներին: Գրադարանն ունի վերանորոգման կարիք:

Մարտունու կենտրոնական գրադարանը կառավարության ծրագրով հանրային կարգավիճակ ստանալու հայտ է ներկայացրել: Գրադարան այցելեց նաև Մարտունու քաղաքապետ Արմեն Ավետիսյանը, ում հետ քննարկվեցին գրադարանի շենքային պայմանների բարելավման հարցերը:

Հայաստանի ազգային գրադարանի գրքափոխանակության հավաքածուից Մարտունու կենտրոնական գրադարանին նվիրաբերվեց 167 միավոր գրականություն:

